Բ ՏԱՐԻ   ՆԻՒ ԵՈՐՔ   ՅՈՒՆՎԱՐ 1 1892   ԹԻՒ 1

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ԱՄՍՈՅ 1ԻՆ ԵՒ 15ԻՆ

Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ   Editor — M. S. GABRIEL M. D.
202 W. 23d St., New York.

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար 2 տոլար կամ 10 ֆրանք։
Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն։

Entered as second-class mail matter. at P.O. NewYork. NY

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կոնդակ Աշըգեան Ս. Պատրիարքի.— Պատասխան.— Առաջնորդութիւն Պատ. Ուալաօ Մէսարոսի Հայ Ազգութիւն.— Հայերէն Լեզուն. Համաճիշք.— Ակնոյ Հայկական Երգեր.— Նամակ Կ. Պոլսէն.— Նամակ Աթէնքէն. Սուրիական Հայ Ժողովրդի Մէջ.— «ՀԱՅՔ». քաջալերութիւններ.— Պատկեր հին Հայ Եկեղեցւոյ.— Այլ և Այլ

Կը խնդրեմք որ ամեն այն Պատ. անձինք որք բաժանորդ են «ՀԱՅՔ»ի կամ կը բաղձան լինել, հաճին փութով յղել մեզ իրենց բաժնեգինը։

Շատերու սովորութիւնն է «չանհ վարել,» բայց եթէ գիտային թէ որքան աւելորդ աշխատութեան կը փոխեն Խմբագիրն խոկոյն վճարելով, այնպէս «կամաց կամաց»ի սկզբունքով չպիտի շարժէին։

Հաճեցէք այսօր կատարել երկու տոլար կամ 10 ֆրանք յղելու փոքր գործն զոր վերջապէս պիտի կատարէք։

Կրնաք յղել այդ գումար փոստի դրամանիշով, «մընի օրտըրով» կամ մանտաթով։

ԿՈՆԴԱԿ

ԱՇԸԳԵԱՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Պատրիարքական կոնդակին որում պատասխանեցինք, հետեւեալ կերպով կ'ամփոփեմք զայս.—

«Մեր ազգն և եկեղեցին դարուց արկածից յեղաշրջութեանց ներքև անընդհատ ժամանակաւ յանհնարին ... վայելէ յետոյ՝ Նախախնամութիւն Աստուածային իւր երկրպագելի սրբութեան և գթութեան շնորհիւ հանեցաւ պահպանել զայն և յանդորր հանել ընդ հովանեաւ պաշտպանութեան տիեզերական Թագաւորութեան Տանն Օսմանեան։ Մեծն աշխարհակալ և տիեզերայաղթ՝ որ ի ձեռաց Նախախնամութեան աւանդ ընկալաւ այս վշտաշխարհ ժողովուրդ, զսա խնամով պահելու և մնչելու համար համարձակութիւն պարգևեց նմա և արտօնեց որ պաշտէ իւր կրօնքը, վարէ իւր ծիսովը, գործածէ իւր լեզուն, ի մի բան՝ ազգային նկարագրի յատկութիւն անփոփոխ պահելու և զարգանալու բոլոր միջոցները համարձակ գործածէ···։

«Հայ ազգն անշուշտ ի վաղուց ժամանակաց անսիր ընդ անկշռելի շնորհս Օսմանեան Պետութեան երախտագիտութեամբ զարմացեալ հպատակութեան և հաւատարմութեան պարտուց հաստատման հետ գոհութեամբ և ուրախութեամբ սրտի կ'աղօթէ միշտ առ Աստուած վասն յաջողութեան և խաղաղութեան աշխարհին և վասն անսասան պահպանման Օսմանեան փառապանծ Գահուն։

«Պատմական և գրական այնքան ապացոյցներու առջև, սիրելի՛ք, որ՛չափ ...տրամաբանական էր վերջին ատեններս մերայնոց մի քանի անխելահասից վերոյ տեսնուիլն մի այնպիսի վարմունք որ գլխովին հակադարձ էին անշուշտ ազգին ընդհանրական ոգւոյն և բնաւորութեան խոհականին։

«Կը յիշէք անշուշտ, երբ անցեալ տարի նոյն ամսոյն, գործոց յանդգնողք արդարութեան ձեռքն ինկան և ծանրապէս պիտի կրէին օրինաց խստութիւնը և ահա նորին Կայսերական վեհափառութիւն իւր առ հպատակ Հայ Ազգն ունեցած անյեղլի սիրոյն և առատ ... համակրանաց նոր ապացոյց մը եւս տալու համար գթոյ յանձանցներուն վրայ և ներեց նոցա պատիժն իւր մեծ հոգւոյն յատուկ վեհանձն և գերազանցապէս ակնածելի անյիշաչարութեամբ։

«Յետ այսորիկ ծանրակշիռ իրողութեան, սիրելի որդեակք իմ ի Քրիստոս, տարակոյս չկայ թէ արժան էր խրատուիլ···, սակայն ցաւով սրտի կը լսուի որ մի քանի անձինք դարձեալ նոյն վարմանց մէջ գտնուիլ կը յանդգնին···։ Մինչև ցե՞ր, սիրելիք, մինչև ցե՞ր այս յանդգնութիւն···։ Ընդէ՞ր չեն յիշեր Ս. առաքելոյն յայտնի պատուիրանը որ կ'ըսէ, «Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է, ի հնազանդութեան կացցէ, քանզի ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ, և որք ենն՝ յԱստուծոյ կարգեալ են։

«Բայց ցաւալի է, որ այս յայտնի ճշմարտութեանց և ազգին յայտնի շահուց հակառակ դուրսերն ոմանք բացէն այլ և այլ թերթեր և յօդուածներ կը հրատարակեն և կ'աշխատին ներսէն իրենց անձնական շահուն գործիներ ճարել. որով կարգ մը անխոհեմներ միամտաբար խաբուելով կը մղուին գործակցիլ այնպիսեաց՝ որ ազգին համար աշխատիլ կը ձեւանան, այլ իրականը բոլորովին ընդհակառակն է։ Եթէ այսպիսի անխոհեմութեան թիւը և օրինակը չատնայ, տարակոյս չկայ որ ազգը պիտի սուժէ, յանժամ փորձով պիտի տեսնենք վիճակնիս և պիտի զարմանք այն դարուն առաքինութեան վերայ՝ յորում մեր հայրերն ի հնումն ազգին և եկեղեցւոյ պահպանման համար հարկ եղած խոհեմութիւնն և իմաստութիւնն ունեցան, և ընդհակառակն պիտի ամաչեմք այս դարուս լուսաւորութեան վրայ՝ յորում լուսաւոր մտօք և բազմաճիւղ գիտութեանց արդիւնքովն պիտի կորսնցնեմք նախկին ժամանակաց մէջ մեր հայերուն շահածները···

Ուստի կ'աղաչեմ սիրովն Յիսուսի Քրիստոսի եւ յորդորեմ զամենեսեան, որ զգոյշ կենան և միմեանս զգուշացնեն·· այսպիսի սատահակներէ···։

Ողջ լերուք։

ԿՆԻՔ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ

Տուեալ ի Պատրիարքարանի Կ. Պոլսոյ, յեօթն ամսեանն Նոյեմբերին Յամի շնորհաց 1891, և Հայոց ՌՅԽ, Թիւ 155.»

ՊԱՏԱՍԽԱՆ

Ամենապատիւ Տ. Խորէն Սրբազան Աշըգեան
Պատրիարք Տաճկահայոց ի Կ. Պոլիս

Սրբազան Պատրիարք Հայր,

Ձեր Սրբազնութեան Նոյ. 7, (19,) 1891 թուակիր կոնդակն, որով անխելահաս զոմանս յերախտագէտ հաւատարմութիւն Օսմ. կառավարութեան կը յորդորէք, և զպարզամիտս ի զգուշութիւն, ընթերցած լինելով և ես՝ յետին աշխատաւոր ազգային Մամլոյն՝ թոյլտուութիւն կը խնդրեմ ինչ ինչ կարևոր դիտողութիւններ Ձեր առջև դնել խոնարհաբար:

Եւ նախ պարտիմ կարևոր թիւրիմացութիւն մի փարատել, նկատմամբ ազգային քաղաքականութեանն արտասահմանի հայ գործիչներու. Մեր նպատակն չէ Օսմ. պետութենէն անջատել հայաբնակ գաւառներն և ընել զայնս անկախ երկիր մի որպէս Թուրք Մամուլն կը ջանայ ներկայացունել: Դժբաղդաբար Հայ գաղթական Աշխարհի գործիչք դեռ բաւական կազմակերպեալ չեն որ ի պաշտօնական յարաբերութիւն մտնեն Բ. Դրան հետ և այս կէտ որոշապէս պարզելով՝ նորա անհիմն կասկածներ փարատեն:

Ի՞նչ է ուրեմն մեր պահանջ. —

Մեր պահանջ այն է որ Հայաստանն վարչային ինքնօրինութեամբ օժտուի, ինքնօրէն նահանգի մի աստիճանին բարձրացուի: Եւ կը պնդեմք թէ Բ. Դրան հարկատու, Սուլթանին վեհապետութիւնն ճանաչող հայկական նահանգ մի կազմակերպել ոչ միայն Օսմանեան պետութեան շահուց հակառակ չէ, այլ մանաւանդ կարի նպաստաւոր:

Օսմ. պետութիւնն զօրանալու և զարգանալու համար պարտի այնպիսի քաղաքականութիւն մի որդեգրել որ յարմարի իւր կազմութեան: Սուլթանաց աշխարհն իւր ընդարձակ սահմանաց մէջ շատ տարբեր երկիրներ և ցեղեր կը պարունակէ: Այդ տարբեր ցեղեր, ինչպէս Հայն, Արաբն, Քիւրդն, Ասորին, ևն, հին ազգեր կը ներկայեն, և անոնց իւրաքանչիւրն տարբեր է ընդունակութեանց կողմանէ. ոմն աւելի և ոմն նուազ քաղաքակրթելի է: Հայն, Արաբն և Քիւրդն իրենց ցեղային կազմութեամբ, շրջափոխութեան տարբեր աստիճանաց հասնելու սահմանեալ են: Եթէ Օսմանեան երկրի ցեղերն երեք կարգի բաժնենք այս տեսակէտով, Հայն՝ հնդեւրոպական ցեղէ լինելով՝ է բարձրագոյնն, Արաբն՝ սեմական ցեղէն գալով՝ կը բռնէ միջին դիրք, իսկ Քիւրդն՝ խառն ցեղ՝ յետին աստիճանին վերայ կը կենայ: Իրողութեանց այս վիճակն Սուլթանին ուսումնասիրութեան արժանի է: Եթէ Նորին Վեհափառութիւն իրեն խորհրդական առնու գիտուն, ցեղագէտ, մարդաբան քաղաքագէտ մի, որպիսի է ԿԻՒՍԴԱՎ ԼԸ ՊՈՆ Ֆռանսայի, և որպիսի է ՎԻՐԽՕՎ Գերմանայի, պիտի համոզուի թէ անկարելի է մի և նոյն օրէնքով, մի և նոյն կերպով կառավարել Հայն, Արաբն, Թուրքն և Քիւրդն: Հասուն և զարգացեալ ժողովուրդ մի, ինչպէս է Հայն, ինքնօրինութեան արժանի է, և Սուլթանն պարտի վարուիլ նմա հետ ինչպէս Հայր մի կը վարուի իւր երիցագոյն և խելահաս որդւոյն հետ. Նորա գործոց մանրամասնութեանց չխառնուիր, միայն վերին հսկողութիւն՝ ի գործ կը դնէ: Ընդհակառակն Քիւրդն դեռ բարբարոս է, այնքան բարբարոս որքան Թիմուրլենկի օրովն. Նորա կեանքն մշտնջենաւոր տղայութեան կեանք մ՚է. պէտք է զնա կառավարել խստութեամբ, երկիւղ ազդելով: Բ. Դուռն, դժբաղդաբար, Քրդին երես տալու և Հայուն երկիւղ ներշնչելու ճամբով, անգիտական քաղաքականութեան կը հետևի:

Սրբազա՛ն Հայր, կ՚աղաչեմ զձեզ, համեցէք առաջին պատեհութեամբ բացատրել զայս էական խնդիր Նորին Վեհափառութեան: Ձեր նուիրական պարտքն է յստակ վեհապետին դնել խորհուրդ մի որ թէ ձեր Ազգին և թէ Պետութեան հաւասարապէս փրկաւէտ է: Կ՚ըսուի թէ Սուլթան Համիտ Բ. սրամիտ վեհապետ մ՚է. ուրեմն նա պիտի հասկնայ, եթէ քննել հաճի, թէ երբէք բազմացեղ և բազմալեզու երկիր մի չէ կրցած քայքայումէ պահպանուիլ առանց ամեն ցեղի և լեզուի վարչութիւնն յարմարցունելու՝ չափելու և ձևելու նորա կարօտութեանց և կարողութեանց համաձայն:

Նաև, Սրբազան Հայր, Ձեր նուիրական պարտքն է Նորին Վեհափառութեան բացատրել թէ ձեր կոնդակներն և բոլոր աշխարհի յորդորներն չպիտի բաւեն Հայ հպատակաց ներշնչել հաւատարմական զգացում ցորչափ կառավարիչք և պաշտօնեայք այնպէս չարունակեն չարաչար վարուիլ անմեղ և աշխատասէր ժողովրդեան հետ: Թող գիտելի լինի Սուլթանին թէ Մուսա Պէյի դէպքն ինքնին այնպէս վիրաւորեց Հայոց հաւատարմական զգացումն որ բիւր կոնդակ չեն կրնար բուժել զայն: Մուսա Պէյի դատաւորներն զա՛յն համոզում ներշնչեցին բոլոր Հայոց թէ Բ. Դուռն որոշած է չպատժել զժանտաժուտան իսկ թշնամեաց մերոց:

Թերևս յընթեռնուլ այս տողից, Սրբազա՛ն Պատրիարք, արգահատիք իմ պարզմտութեան վերայ, որ կ՚ենթադրեմ թէ հնար է Ձեզ այսպիսի խնդրոյ վերայ ներկայացում մ՚ընել և այնպէս յստակ խօսիլ Սուլթանին: Բայց ես այր հաւատոյ եմ. ես «ամենայնի հաւատամ:» Բարւոյն յաղթութեան, ճշմարտին զօրութեան, գեղեցկին սրբարար ազդեցութեան կը հաւատամ: Կը հաւատամ թէ 2000 տարիէ ի վեր նահատակութեան սեղանին վերայ այրող բայց չսպառող իմ սիրելի Ազգին Պատրիարքն, Աշըգեան Սրբազանն, ներշնչուելով յԱմենակալէն, կարող է իւր հովուական ցուպ և Ս. Խաչ առնլով երթալ իբրև մարգարէ մի խօսիլ Սուլթանին, և Սուլթանն չպիտի վրիպի ազդուելէ երբ տեսնէ իւր առջև Ազգի մի Գլուխն որ գլուխ ի կշիռ դրած՝ սուրբ զօրութեամբ զինուած, մաքուր չարժառիթով, պարզ լեզուաւ կը խօսի, և իւր հօտին ցաւերուն ճշմարիտ և միակ դարմանն կը խնդրէ — զինքնօրինութիւն Հայաստանի ընդ վեհապետութեամբ Սուլթանին:

Բայց եթէ Դուք, Սրբազան Պետ, չունենաք այն նահատակային արութիւն զոր ազգին ճգնաժամական վիճակն կը պահանջէ, եթէ չարունակէք խոստանալ Սուլթանին այն ժողովրդական հաւատարմութիւն զոր բիւր անօրէններ կը վիրաւորեն անպատիժ և սանձարձակ, Ազգին անխելահաս դասերն պիտի ստիպուին յուսահատական միջոցներու դիմել և խելահաս դասերն օրինաւոր և իմաստուն միջոցներու որպէս զի ձեռք բերեն հայաշատ գաւառաց համար այն վարչական պայմաններ որք անհրաժեշտ են մեր ազգային քաղաքակրթութեան համար:

Սուլթան Համիտ կայրն եւ վերջապէս պիտի տեսնէ թէ կոնդակներու միջոցաւ չկրնար դարմանուիլ չարիք մի որ զէնքերով, կոտորածներով, սարրական արդարութիւնն ժխտելով յառաջ եկած է:

Սուլթանաց հաւատարմագոյն և օգտակարագոյն հպատակներն Հայք եղած են. Սուլթան Համիտ զայս անշուշտ քաջ գիտէ: Թող նոյնքան քաջ վստահ լինի թէ Հայերն սքանչելի կերպիւ իւր գահուն և պետութեան օգտակար պիտի հանդիսանան, եթէ զայնս անյեղլի երախտագիտութեամբ լնու օժտելով զՀայաստան կրթական, կրօնական և քաղաքային ինքնօրինութեամբ:

Պատիւ ունիմ լինել,
Սրբազան Պատրիարք Հայր,
Ազգիս և Ձեզ անձնուէր ծառայ

Նիւ Եորք
16 Դեկտ. 1891

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ
Խմբագիր «ՀԱՅՔ»ի

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

1891, ԴԵԿՏ. 19 ՆԻՍՏՆ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏ. ՈՒԱԼՏՕ ՄԷՍԱՐՈՍԻ

ՀԱՅ ԱԶԳՈՒԹԻՒՆ

Ատեանն բացուեցաւ ատենապետութեամբ Մեծ. Տիար Յ. Թաւշանճեանի, և յետ ընթերցման նախորդ նստի ատենագրութեան՝ և ջութակի վերայ նուագածութեան, Տիար Ատենապետն մի քանի պատշաճ բանիւք ներկայեց ժողովոյ զատենախօսն երեկոյին։

Բուռն ծափահարութեանց մէջ Պատ. Մէսարոս ոտքի ելաւ և Անգղիերէն լեզուաւ խօսեցաւ ուշադիր և իմացող թէև ոչ թուով ահագին՝ բազմութեան։ Ահաւասիկ նորա ատենախօսութեան ամփոփումն.—

Ասիացիք հայրենասիրութիւն չունին. նոքա կրօնային ժողովուրդներ կամ կուսակութիւններ կը կազմեն՝ հայրենիքի զգացումէն թափուր։ Բոլոր Ասիական ժողովրդոց մէջ միայն մէկ հայրենասէր ժողովուրդ կայ, այն է Հայն։ Միայն Հայերն կրցած են ըմբռնել հայրենիքի գաղափարն Եւրոպացւոց պէս, և կը կրեն հայրենասիրական զգացում։ Նոքա սքանչելի կերպով դիմացած են բռնապետական ահագին ճնշման երկար դարեր, որպիսի ճնշման չպիտի դիմանար մեր այս Ամերիկան, և պիտի բաժնուէր իւր բաղադրիչ ցեղային տարրերու։ Նաև Հայերն, համեմատութեամբ իրենց փոքր թուոյն, զարմանալի թուով մարդիկ տուած են աշխարհի։ Անգղիոյ պէս երկիր մի քանի՞ դարու մէջ Շէյքսփիր մի կրցած է հանել։ Ո՜րքան մեծ նշանակութիւն ունի ձեր ցեղին համար այնքան նշանաւոր մարդիկ իւր ծոցէն բխել։

Հայոց հայրենասիրութիւնն, բռնապետութեան դիմանալն և շատ երևելի մարդիկ հանելն կ'ապացուցանեն ԹԷ ՀԱՅԵՐՆ ԱԶԳ Մ'ԵՆ, (ծափահարութիւն։

Թուրքն ազգ չէ. նա կրօնային ժողովուրդ մ'է։ Եւ որովհետև նա ինքն ազգ մի չէ, չէ կրցած ընկլմել իւր մէջ ուրիշ ազգեր։

Թուրքն կառավարութիւն ալ չէ. աւելի նման է աւազակութեան դրութեան մի։ Այս երկրին մէջ երբ հրդեհ պատահի, ոստիկաններն կ'երթան այրող շէնքն կը պաշտպանեն յափշտակութեանց դէմ. իսկ երբ Տաճկաստանի մէջ հրդեհ պատահի, ոստիկաններն կը վազեն կ'երթան որ իրենք առնուն աւարի մեծագոյն բաժինն (ծափահարութիւն)

Շատ խօսուած է Հայոց հաւատարմութեան մասին հանդէպ Բ. Դրան։ Հայերն պարտաւոր չեն Դրան կառավարութեան հնազանդելու. միթէ մարդուս խիղճն կամ կրօնական զգացումն կը պարտաւորէ՞ զինքն աւազակաց յանձնուելու։ Դիտեցէք թէ չեմ ըսեր թէ Հայերն պարտին ապստամբել։ Դարձեալ, միթէ կրօնային մարմին մի կարո՞ղ է ժողովրդոց քաղաքական ղեկն վարելու։ Ի՞նչ պիտի ըսէինք մեք Ամերիկացիքս եթէ Միացեալ Նահանգաց կառավարութիւնն Ժողովական կամ Մկրտական կամ Երիցական կամ Մեթոտիստ յարանուանութեան ձեռքն լինէր։ Ի՞նչպէս կրնանք պահանջել ուրեմն որ Հայ ազգն ընդունի մահմետական կառավարութիւն մի։

Անգղիացւոց վերայ մեծ պատասխանատուութիւն կը ծանրանայ, վասն զի նոքա վերջին ռուս և թուրք պատերազմէն յետոյ թրքերն ազատեցին Ռուսաց զարկէն ահէն, հեռացունել տուին ռուսական զօրքն Կարինէն, որք աւազակաց ձեռքին կապանք պիտի լինէին։ Կրնամ ըսել թէ Հայաստանի մէջ պատահող սպանութեանց, ջարդերու և ոճիրներու մեծ մասին պատասխանատուութիւնն Անգղիոյ վերայ կ'իյնայ։

Ամերիկացիքս ալ շատ կը պարծենանք, որպէս թէ բոլոր աշխարհի բարերարներն լինէինք։ Իրաւ 1822 ին Նիւ Եորք քաղաքն — յայնժամ հազիւ 40 հազար բնակիչ ունէր — 80 հազար թալէր հանգանակեց ի նպաստ Յունաց որ կը ճգնէին ազատութիւն ձեռք բերել։ Այժմ, թող Ամերիկա ներս քաշէ իւր լեզուն եթէ անկարող է Հայոց ազատութեան օգնելու՝ յղելով մարտանաւ մի յարևելս (ծափահարութիւն և պրաւօ ձայներ) Միթէ Հայերն ևս համակրութեան արժանի չե՞ն։ Ինչո՞ւ ուրիշներուն օգնեց քաղաքակիրթ աշխարհն, և պիտի փարանի օգնել նաև այն ազգին որոյ հայրենիքն մարդկութեան օրօրան եղած է։ Միթէ չե՞մք կրնար ըսել թէ Աստուած առաջին մարդն հայ ստեղծեց։ Եւ այսօր մաքուր մնացած, լեռնաբնակ Հայերու կազմութիւնն, դէմքն արական վեհ դիմաց տիպար չէ՞ միթէ։ Աբրահամ Ուր քաղաքէն էր, կ'ըսէ գիրքն, ուրեմն Հայ էր նա, զի Ուր Հայաստանի սահմաններուն մէջ է, և յայտ է նաև թէ Աբրահամ քաղաքակրթեալ ազգի մի ծոցէն ելաւ գնաց, որպիսի էր Հայաստանն իւր այն ատենուան տարբեր պայմանաց մէջ։ Չես կրնար 20 մղոն ճամբորդել Հայաստանի մէջ առանց մարդկային սեռին մանկութեան ոգին դէմդ առնելու։ Տակաւին Հայաստանի բոլոր անցեալ փառքը ճանչուած չէ աշխարհի։ Թող Մեծին Տիգրանայ մայրաքաղաքն գտնուի, փորուի, և ահա քարինք պիտի խօսին ի նպաստ ձեր, և քարինք այս դարուս մէջ աւելի պերճախօս են քան մարդիկ։

Հայկական խնդիրն յուսափայլ խնդիր մ'է։ Եւրոպա չկրնար թողուլ որ իւր անհոգութեան շնորհիւ. Թուրքք ամօթալի բռնապետութիւնն շարունակեն և ոչ ալ կրնայ թողուլ որ Ռուսիա կուլ տայ աշխարհիս երեսին վերայ գտնուող ընտրելագոյն գաւառներն։ Ուրեմն ի՞նչ կը մնայ ընել։ Նայէ աշխարհացոյց տախտակին, և երբ աչքդ յածելով և խորհրդածելով հանդիպի Հայաստանի, կարծես կը լսես նորա աղաղակն որ կը գոչէ, թէ ինքն է լուծումն այս դժուարութեան։

Պէտք է որ Հայաստան լինի նորէն Հայաստան, արևելից վաճառականութեան և Եւրոպայի ալ վաճառականութեան համար, և աշխարհի համար լաւ է որ այդ այդպէս լինի, և ես շատ յոյս ունիմ թէ պիտի լինի։

Բուռն և երկար ծափահարութեամբք գոռաց սրահն յաւարտ ատենախօսութեանն։

Ատենապետն անգղիերէն խօսելով պատշաճօրէն ներբողեց ատենախօսութիւնն։ Գիտէի, ըսաւ, թէ Ադամ հայ էր, քանի որ Հայաստանցի էր, բայց չգիտէի թէ Աբրահամ ևս հայ էր։ Այսուհետև պէտք չէ ըսել թէ Հայերն Հրէի կը նմանին, այլ թէ Հրէայք կը նմանին Հայու։ (Ծափահարութիւն)

Տր. Գաբրիէլեան առաջարկեց որ ժողովն յատկայս շնորհակալութեան քուէ տայ ատենախօս հիւրին։ Այս առաջարկ երկրորդուելով, ժողովն ոտքի ելնելով պատուեց զատենախօսն։

Յայնժամ Պատ. հիւրն քանի մի վայրկեան նորէն խօսեցաւ, յայտնելով իւր խնդութիւն և գոհունակութիւն։ Նաև ըսաւ թէ մտադիր է զՀայաստան այցել միանգամ, և որովհետև անկարելի է քաջ ուսումնասիրել երկիր մի առանց այն երկրին լեզուն ճանաչելու, ինքն որոշած է հայերէն սովրել նախ, Տր. Գաբրիէլեան բարեհաճած լինելով ուսուցանել նմա այն ընտիր լեզուն։

Հիւրին մեկնելէն յետոյ Միութիւնն զբաղեցաւ իւր օրակարգի միւս խնդիրներով։

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒՆ

ՀՈՄԱՆԻՇՔ

Ա.

Լեզուն զարգացման նոյն օրինաց կը հպատակի ինչպէս կենդանի էակ մի: Բարձրագոյն կարգի կենդանին անգամ իւր սաղմնային սկզբնական վիճակին մէջ բոլորովին նման է ստորնագոյն կենդանւոյն: Նոյնպէս լեզուն ի սկզբան անդ միավանկ հնչիւն մ'է հազիւ կենդանեաց ձայնարկութիւններէն տարբեր, բայց բառերն տակաւ կը մեծնան, կը բազմանան, կը ճիւղաւորին և լեզուին բովանդակ կազմութիւնն կը զարգանայ:

Զարգացման մէկ նշանն այն է որ իմաստներ փոխանակ անորոշ և ընդհանուր կերպիւ նշանակուելու, կը բացատրուին մինչև երկրորդական փոփոխութիւններ յայտնող բառերով:

Հայերէնի մէջ շատ բառեր կան որք ի սկզբան իբրև անտարբեր հոմանիշ գործածուած են՝ գոլով նոյն ձայնին կամ նոյն բառին փոքր ինչ եղանակաւորեալն, հնչման գաւառական տարբերութիւն մի կամ հեգելու անկանոնութիւն մի, բայց երբ այն բառին բացատրելու գաղափարն աճելով ճիւղաւորած է, յայնժամ բառին տարբեր հնչումներն զանազանիչ գոյներ առած են:

Օրինակի համար ՃԵՂ և ՑԵՂ մէկ բառ են սկզբամբ, բայց յընթացս լեզուին յառաջդիմութեան՝ ցեղ բռնած է նշանակել ազգի կամ ժողովրդեան մի ստորաբաժանումներ:

Նոյնպէս ՀՈԳԻ և ՀՈՂՄ ի սկզբան նոյնն կը նշանակէին, բայց տակաւ ոգի բառն իւր ընկերէն բաժնուած և բոլորովին վերացեալ, բնազանցական իմաստ առած է:

ԱՐՈՒԵՍՏ և **ԱՐՀԵՍՏ** մի և նոյն բառ կը սեպուէին, բայց այժմ մեր օրով, արհեստ բառն կը գործածենք metierի իմաստով, այն որ չօշափելի օգտակարութեան կը ծառայէ, իսկ արուեստն՝ artի նշանակութեամբ, այսինքն այն որ օգտակարին վերայ գեղեցիկն, պէտքին վերայ ճաշակ կը յաւելու: Ինչպէս այդ երկու բառեր հայերէնի մէջ իրարու մօտ են, նոյնպէս արուեստն մօտ է արհեստին, և ամեն արհեստաւոր որ տաղանդ շատ ունի և լաւ կը շինէ, կը սեպուի արուեստագէտ: Կօշկակար կայ որ արհեստաւոր է, և կօշկակար ալ կայ որ արուեստագէտ է:

Ֆռանսերէն լեզուն մեր արդի հայերէնի զարգացման վերայ եզական ազդեցութիւն գործած է: Այն ազդեցութիւն այնքան մեծ է արդի հայերէնին վերայ որքան հելլեններէնին եղած է մեր գրաբարին վերայ: Ուսումնասիրութեան արժանաւոր նիւթ մ'է այս, յոր մխել չէ մեր նպատակ այժմ, այլ ցուցնել թէ ո՛րպէս այդ լեզուի ազդեցութեան շնորհիւ մեր լեզուի բառերն նորանոր ճշդումներ և փոփոխութիւններ տանուլ սկսած են: Օրինակի համար մինչև վերջերս ահաւասիկ և այսաւասիկ անխտիր կը գործածուէին, այժմ ահաւանիկ կը նշանակէ նախընթացն (voila) և ահաւասիկ կամ ասաւսիկ) կ'ակնարկէ հետևեալին (voici;) Տակաւին այս փոփոխութիւն ամենուն ուշն գրաւած չէ, և մեք դիտած եմք որ « Արևելք » երբեմն խնդրոյ մի վերայ խօսքն աւարտելով կ'սէ « ահաւասիկ խնդիր մը որ քննութեան արժանի է » որպէս թէ խնդիրն նոր պիտի յիշէր. պարտէր ըսել « ահաւանիկ...»

ԶՆՆԵԼ և **ՔՆՆԵԼ**.— զննելու գործողութիւնն զգայարանաց միջոցաւ կը կատարուի, քննել՝ աւելի բարձր և բարոյական կարգի գործողութիւն մ'է: Զննել կը թուի լինել զնել, զարնել բառին սաստկական ձևն, և սկզբնական առումն է բանի մի զարնելով իմանալ թէ կը կարի՞ դիւրաւ կամ ողջ՝ չկոտրած վիճակի հնչիւնն կ'ընծայէ՞: Այդ անձուկ իմաստէն մեկնելով առումն աւելի ընդարձակուած է և սկսած է գործածուիլ աչքով ևս կատարուող քննութեան: « Նուրբ է տարր լուսոյ, » կ'ըսէ Եզնիկ, « այլ զի ակամբ զննի, մարմնաւոր է: » Խնդիր մի, հիւանդութիւն մի կը քննեմք, ոսկոր մի, ժամացոյց մի, վէրք մի կը զննեմք:

ՀԻՒՂ, ԽՐՃԻԹ, ՏՈՒՆ, ԱՊԱՐԱՆՔ, ԱՐՔՈՒՆԻՔ.

Հիւղն է քան զամենայն նախնական ձևն բնակարանի. տիղմով կամ անտաշ փայտով շինուած:

Խրճիթն է լաւագոյն քան զհիւղ, զի տիղմն աղիւսի վերածուած կամ փայտն կոփած լինելով գործածուած են:

Տունն այլ և այլ մասանց ստորաբաժանեալ է և քաղաքացւոյ կամ քաղաքակիրթ մարդու բնակարանն է: Հայերէն լեզուն զարմանալի կերպիւ կը ցուցնէ թէ հայ ժողովուրդն որքան տնասէր է եղած, և որպիսի իմաստասէր մօք յօրինած է բառերն. մեզ ծանօթ լեզուաց մէջ չգիտեմք ուրիշ մի որ բաղդատուելի կարենայ հայերէնին հետ այս տեսակէտով. Հայն տանն մէջ գտնուողներուն կ'ըսէ ընտանիք, հարուստին՝ մեծատուն, անէ զուրկ եղող աղքատին՝ տնանկ, կ'ըսէ տնտես, տնօրէն, տնաշէն, տնաւէր, տանուտէր, տանտիկին, տնակար, տնակալ են.

Ապարանքն է մեծ տուն ազնուականի, իշխանի կամ թագաւորի:

Արքունիքն է առաւել իսկ քան զապարանս, զի արքայի միայն տունն կը նշանակէ:

ԱԿՆԱՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Ազգային բանաստեղծութեան պատուական կտորներ կան Ակնայ մէջ և շրջակայքը: Ձմեռ եղանակն հասած է նորէն և հարսնիքներ պիտի սկսին: Երկար գիշերներն պատեհ կ'ընծայեն ծնողաց խօսիլ խնամութեանց վերայ, և ամուսնական հասակի հասած որդւոց հարսն ընտրել: Ահաւասիկ հարսնիքի ազգային երգ մի Ակնայ, առ հարսն ուղղեալ.—

Աղուո՛ր, քեզ ո՞ր մար է բերեր,
Ան թուխ աչուի մարն է բերեր.
Մարն է բերեր մեզի համար,
Մենք ինք եկեր քեզի համար:
Հայ իմ, հայ, աննման աղուոր,
Չի կայ քեզի նման աղուոր:
Աղուո՛ր, քու հագածդ ալ է,
Ելի խալուն վրայ քալէ.
Ալուկ փեշերդ վեր ծալէ:
Հայ իմ, հայ, աննման աղուոր,
Չի կայ քեզի նման աղուոր
Անձրևը խաղաղ կու թորայ,
Թագաւորին ձին կու խաղայ,
Հարսին ալ սիրտը կու դողայ,
Հարսին ալ սիրտը կու դողայ:
Հայ իմ, հայ, աննման աղուոր,
Չի կայ քեզի նման աղուոր:
Առաւօտուն դէմ ի արև
Թագաւորը սայ մօրը բարև.
Բարով եկիր դուն բարկ արև
Ցաթեցիր մեր տանն ի վերև:
Հայ իմ, հայ, աննման աղուոր...
Երկու կաքուուկ ունինք բունը,
Կու կաթէ երեսնուն զունը.
Դուն ես մեր տան սիւնը.
Դուն ես մեր տան սիւնը:
Առաւօտուն կանուխ կանուխ
Մննիմ պաղչան քաղիմ անուխ,
Հարսինը սիրտն է պուլանուխ,
Հարսինը սիրտն է պուլանուխ:
Հայ իմ, հայ, աննման աղուոր...

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Կ. Պոլիս, 8 Դեկտ. 1891

Բարեկամ.

Վարժապետական ժողովներ ունեցանք, կրթական եղանակաց վրայ շատ խօսք խօսեցանք և խել մը որոշումներ տուինք։ Զկարծես թէ ատ բարի որոշումները բարւոքման պիտի ծառայեն։ Դպրոցներու բարեկարգութիւնը աղէկ ծրագրեր որդեգրելով չըլլար, հապա այդ ծրագիրները ի գործ դնելու կարող ուսուցիչներ ունենալով։ Մեր Ազգին, մեր ազգային իշխանութեանց, յատկապէս Ուսումնական Խորհրդոց գործն եղած ըլլալու էր ընտրելագոյն երիտասարդներ ուղարկել Եւրոպա և մանկավարժութեան մասնագիտութիւնն անոնց ընծայել, որոնք վերադառնալով յօրինէին ծրագիր, մանաւանդ թէ իրենցմէ բխէր այն մասնաւոր եղանակն դաստիարակութեան որ մեզի կը յարմարի։ Ա՛ս բանը 20—30 տարի առաջ սկսուած պէտք է լինէր։ Իսկ հիմակուան ժողովները նշան միայն են թէ մեր վարժապետներն, մեծ մասամբ ինքնաբոյս, սկսած են զգալ թէ իրենք վարժապետ չեն բառին արդի իմաստովն։

Պատրիարքարանի շէնքն վերաշինելու որոշումը բուած է, անշուշտ գիտես։ Առ այդ յանձնաժողով մ'ալ անուանած է։ Մինչդեռ պատրիարքարան կոչուած հաստատութեան հոգին մեռած է կրնանք ըսել, արտաքին շէնքն, մարմինն բոլորական քայքայումէ փրկել կ'ուզենք։ Ասոր խօսք չկայ. շէնքն խարխուլ է, Ազգին պատիւ չբերեր, Եւրոպացուց այցելութեան դէմ պահպանել պէտք է զայն։ Սակայն երանի թէ զգայինք նաեւ պատրիարքարանի հոգի տալու պէտքն։ Աւա՜ղ, բարեկամ, «անունը կայ ինք չի կայ։»

Պատրիարքարանը հիմա պարզապէս Բ. Դրան խաղալիք դարձած է։ Փոխանակ ազգին շահերը պաշտպանելու Դրան առջև, Դրան շահերն Ազգին քարոզելու պաշտօն ունի։ Ցաւալին այն է որ կառավարութիւնն իր շահերը ուղիղ չըմբռներ և անոնք պաշտպանելու չիտակ ճամբան չգիտեր։ Տաճկատանը կամաւոր և ակամայ ստութեանց երկիրն է։ Էն կորովի նկարագիրներն անդամ անզգալի կերպով կը տկարանան, կը կքին։ Ստրկութիւնը ծայրայեղ աստիճանի հասած է։ Մեր լրագիրները հետ զհետէ կարծես կը կորսնցնեն իրենց նշանակութիւնը, և գրեթէ բոլորովին մոռցած են արդէն իրենց կոչումը։ Ակամայով կը սկսին և կամայի կը դառնան շողոքորթութիւններն։

Աչըգեան Պատրիարքը վանական մ'էր. բնական էր ենթադրել թէ Պոլսոյ մէջ ապրած եկեղեցականներէն շատ տարբեր պիտի գտնուէր երկու մտօք. մէյ մը որ անոնց չափ չպիտի գիտնար քաղաքականութիւն և քաղաքավարութիւն. մէյ մ'ալ որ անոնց չափ չպիտի շլանար աշխարհային պերճանաց փայլէն։ Ափսո՛ս որ երկրորդ կետին մէջ Աչըգեան շատ տարբեր ելաւ. վանականի պարզ արհամարհոտութիւն չունի նա աշխարհի և աշխարհի մեծերուն համար. ընդհակառակն կարծես թէ անյագ և չտես հետամտութիւն մ'ունի երկրաւորաց հաճելի ըլլալու։

Ո՛ գիտէ Բ. Դրան պաշտօնեաներն և նոյն իսկ Սուլթանն ո՛րքան զարմացած են տեսնելով թէ Աչըգեան Պատրիարք գոնէ Մահմետական Շէյխերուն, Տէրվիշներուն չափ չցուցներ իւր կրօնային բարձր կարգին վեհանձնութիւնը. օր մը արի խօսք մը, Աստուծոյ ծառայի մը վայելուչ համարձակ մէկ բառը չլսուիր ատ եկեղեցականին բերնէն։ Եկեղեցական դասէն՝ ոչ թէ աշխարհական՝ ազգային ներկայացուցիչ ունենալն ատ միակ առաւելութիւնն ունի որ յաչս երկրաւոր իշխանութեան արդարանալի կամ օրինաւոր կը նկատուի նորա պարզախօս համարձակութիւնն, յատկութիւն մը որմէ Աչըգեան Պատրիարք խպառ թափուր է։

Բարեկամ, սիրտս կ'այրի։ Սահմանադրական ժողով առանց Երեսփոխանի. Պատրիարքութիւն առանց Պատրիարքի. Վարժարաններ առանց Վարժապետի, Եկեղեցիներ առանց Եկեղեցականի. Լրագիրներ առանց Մամլոյ ազատութեան... ի՜նչ ողբալի վիճակ։

Երբեմն կը բարկանամ այն արատասիրանի գործիչներուն դէմ, որոնք այս ամենը գիտեն բայց շնորհքով զօրութիւն մը ըլլալու, միանալու կը վարանին խեղճ ու կրակ առարկութիւններ, անկարեւոր անհամաձայնութիւններ պատճառանք բռնելով։ Ժամանակը կ'անցնի՜։ Հիմա ատոնք բաւական պատկառելի այժ մը պէտք է ներկայացնէին, պէտք է Պատրիարքին, Ազգային Ժողովին, Բ. Դրան, Սուլթանին անդամ համոզիչ բաներ, պաշտօնական գրեր ուղղելու վիճակին մէջ ըլլային։

ԱՆԵՐԵՒՈՑԹՆ

ՆԱՄԱԿ ԱԹԷՆՔԷՆ

ՍՈՍԻԱԼԻԶՄԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ

Ձեր «ՀԱՅՐ» Լրագրի 22-րդ թուոյն մէջ կարդացի Ընկերվարականութեան մասին երկու գրութիւններ, առաջինն Ն. Կարապետեան ստորագրութեամբ և երկրորդը Ձեր Խմբագրական պատասխանը։ Թոյլ կ'տաք, Ցարգոյ Խմբագիր, որ Հնչակեան Կուսակցութեան նախկին օգնական անդամներէն մին, պարզէ իւր նկատողութիւններն Ընկերվարականութեան մասին։ Կ'ըսեմ նախկին օգնականներէն մին. որովհետև՝ ներքին՝ աւելի անձնական պատճառներով բաժնուած եմ այդ Կուսակցութենէն և ոչ թէ սկզբունքէն, գաղտնարէն, որը ինձ համար սուրբ է և ճշմարիտ. պատճառներ, որը դատելու օրը դեռ չէ հասած։

«ՀՆՉԱԿ»ի գոյութենէն, այսինքն Ընկերվարական գաղարարները մեր մէջ մուտ դանելէն իվեր. գիտէք. ի՞նչ պատասխանած են շատ Հայեր, ահա՝ «Սոսիալիզմը վտանգաւոր է մեզ, նա մեր դատին վտանգ կ'սպառնայ. ինչ՞ու. որովհետև Եւրոպական (պէտք է աւելցնել պուրժուազական) կառավարութեանց ականջին շատ խորթ կը հնչէ այդ անունը, անուն որոնք կուզեն արմատէն խըլել, վերցնել»։ Տգեղ ու միամիտ պատասխան։ Արդեո՞ք կայ աշխարհիս երեսին մարդ մը որ իւր անձին վտանգ սպառնացող բանի մը հաւանութիւն տայ։ Եւրոպական կառավարութիւնք, որոնց մեծագոյն մասը Կայսերական են, նոյն իսկ Ֆռանսան՝ որը թէև հանրապետական, այլ կառավարական ղեկը լինելով պուրժուազիի ձեռք, օգտուելով իրենց այժմեան գօրաւոր դիրքէն. դէմ կը կենան և չեն ուզեր իմանալ Սոսիալիզմ անունը. ինչ՞ու. վասնզի իրենց անարդ շահերուն վտանգ կ'սպառնայ։ Այդ միամիտ առարկութիւնը ընող մեր Հայ պարոններն պէտք է գիտնան որ թէպէտև Եւրոպական այդ կառավարութիւնք սոսկալի հակառակորդ են սոսիալիզմի, այսու հանդերձ սկսած են գոհացում տալ ժողովրդի՝ այդ աշխատաւոր մեծամասնութեան Ընկերվարական վարդապետութեանց վրայ հիմնեալ պահանջումներուն։ Տարածուելով Սոսիալիզմը ամեն ուրեք և ունենալով ստուար մեծամասնութիւն, նոքա աշխատաւոր մեծամասնութիւնը չը պիտի սպասեն այլ ևս գոհացում տիրող կառավարութենէն, որովհետև այդ կառավարութիւնք այլ ևս դոյութիւն չըպիտի ունենան և պիտի անկնին ինք ըստ ինքեան, պիտի կազմեն Ռամկապետական Քաղաքական — Տնտեսական կառավարութիւն։

Անցնինք մի ուրիշ կետի։ Դուք կը պնդէք թէ տեղի չ'կայ Օսմ. Հայաստանի մէջ Ընկերվարականութիւն քարոզել, վասնզի ձեր առելով. մեր մէջ չկան, ոչ ճարտարութիւն, ո՛չ գործարան և ո՛չ դրամատէր։ Ճշմարիտ է որ այժմ չ'կան ոչ ճարտարարուեստութիւն և ոչ գործարան, այլ դրամատէր, կարծեմ թէ փոքր իշատէ

կը գտնուին ։ Օրինակ՝ այն սարրաֆներն․ փոխճաճիներն որոնք հայ գիւղացիի ներկայ հարստահարեալ դրութեան մէջ իսկ կը կողոպտեն, ինչե՞ր պիտի չ'ընեն, երբ փոքր ինչ ազատութիւն գտնեն, այդ սարրաֆներն․ փոխճաճիներն և այլք, պէտք է ասել որ այսօր յայտնապէս հրապարակի վրայ չ'են դներ իրենց դրամագլուխը․ որովհետև կը վախնան, չ'լինի թէ յափշտակուին թուրք կառավարութենէն, և երբ, ինչպէս ըսինք, լինի մի քիչ ազատութիւն, նոքա ի վնաս աշխատաւոր մեծամասնութեան, պիտի բանան քսակնին, հրապարակ պիտի դնեն իրենց դրամագլուխը, պիտի հիմնեն գործարաններ կոշկակարութեան, դարբնութեան, ոսկերչութեան և այլն և պիտի լինին անհատական ստացուածք և մի և նոյն ժամանակ կողոպտող աշխատաւոր մեծամասնութեան ։

Այս այսպէս լինելով՝ անհրաժեշտ է քարոզել հայ ժողովրդի՝ Քաղ․ ազատութեան հետ և Տնտ․ ազատութիւնը ։ Եւ պէտք է ըսել․ ինչպէս այլ և այլ փորձեր ցոյց կու տան, հայ ժողովուրդը աւելի տրամադիր է հասկանալու Տնտ․ ազատութեան գաղափարը քան Քաղ․ ազատութիւն, կ'ըսեմ տնտեսական ազատութիւնը, որովհետև այսօր․ եթէ թրքական կառավարութիւն ձգէ հայ ժողովրդին տէր իւր աշխատութեանց, չ'հարստահարէ, չ'կողոպտէ գիւղացիի արիւն քրտինք մտած աշխատանքը, միւս կողմէ նոյն այդ ժողովրդի մտաւոր կուրութիւնը դէպի Քաղ․ լիակատար ազատութիւնը, պատճառ պիտի լինի որ նոքա գոհ լինին թուրք կառավարութենէն, և միթէ՞ Փռանսայի գիւղացին ալ չ'էր այնպէս մեծ յեղափոխութենէն առաջ, հողը․ իւր աշխատութիւնը կուզէր, աւելի ու պակաս իբրև թէ բաժնեցին հողը և յետոյ կառավարութիւնը դարձաւ Պուրժուազական և սկսաւ ամեն կերպերով մինչև օրս խեղդել ժողովրդին ։ Այլ սակայն գիտակցական յեղափոխականին պարտքն է պատրաստել հողը, քարոզել նոյն այդ ժողովրդին այժմէն Քաղ․ ազատութեան հետ միասին և Տնտ․ Ընկերվարական ազատութիւնը ։

Ընդունեցէք․ Յարգոյ խմբագիր, յարգանաց խորին հաւաստիքը ։

5 Դեկտ․ 1891 Աթէնք Գ․ ՔԱԼՖԱՅԵԱՆ

ՀԱՅՔ

ԲԱԶՄԱԼԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊաթավիայԷՆ Մեծ․ Տի․ Ս․ Ա. Թ․ կը գրէ Նոյ․ 6 ին․ — Պաթաւիոյ Հայ բնակիչքն թուով սակաւ են, այն է 10 տունք․ Սուրաբիոյ՝ 6 կամ 7 տունք ։

ՀԱՅՔ պատուական լրաթերթի ձերոյ գովելի և հայրենասէր պարունակութիւրքն փափաքանօք կարդամք, և տամ կարդալ ազգայնոց ։ Ուրախ եմ խոստովանիլ զի « Հայք »ի մէջ փոքր միջոցում այդպիսի սիմպատի է գտել իւր հայրենասիրական հոգւովն ի մէջ ազատամիտ հայրենասիրեաց ։ Իրաւի չատ ափսոս, զի նոքին որ պարտեն միութիւն քարոզել հասարակաց, նոքա գլխաւոր պատճառ դառնան բազմիցս խորթացուցանել զմիմիանս"’

ՊօէլէլԷՆկԷՆ կը գրէ Մեծ․ Տի․ Մ․ Թ․ Մ․ խրախուսական մի նամակ, յորում կ,ըսէ « ձեր պատուական ՀԱՅՔ լրագիրն մեծաւ ուրախութեամբ կարդացինք, և ցանկալով յաջողութիւն Ս․ գործոյն որ յանձն էք առեալ, սովաւ ուղարկեմք առ Ձերդ հասցէն տասն բաժնեգին ։

կեցցէ՛ Հայաստան, կեցցէ՛ իւր հարազատ որդին Մեծապատիւ Տոք․ Մ․ Ս․ Գաբրիէլեան առ որոյ միամ խոնարհ և անձնուէր ծառայ, են

Մեծ․ Գ․ Յ․ Գ․ կը գրէ Նիւ Հէյվընէ (այն որ 7 Թ․ Նուիրեց « Հայք »ի) ․— « Բարեկամ, յաջողութիւն ըսուածը բարեկամը բարեկամին տալ կրցած մէկ ծաղկեփունջը չէ, պէտք է որ անիկա մէկիկ մէկիկ փուշերուն մէջէն ժողվենք և փնջենք ։ Իմ քով՝ արդարութեան և սկզբունքի համար աշխատիլը ինքնին յաջողութիւն մ'է ։ Դժուարութեանց դիմանալ, թշնամի վանտըկիլ, բարեկամներ կորսնցնել, բամբասուիլ՝ անձնական շահերը կորսնցնել ըսել է, և ասոնց դիմանալ, ասոնց դէմ ելլել՝ դիւրին չէ, և ով որ կրնայ այնպէս ընել, ահա անիկա յաջողած է․ ասկէ մեծ պատերազմ և ասկէ մեծ յաջողութիւն չըլլար ։

Մեծ․ Տի․ Մ․ Սըվազլեան կը գրէ Լոնտոնէն․ — « Դժբաղդաբար ձեզ պէս սկզբունքի տէր մարդիկ քիչ են ։ Մեր մեծ թշնամին ագիտութիւնն է, և դուք, ազնիւ Տէր, մեծ ծառայութիւն կը մատուցանէք ազգին մանաւանդ ոչ ռուսահայ Հայոց, իրենց ներշնչելով կրիտիքական ոգին և լուրջ հայրենասիրութիւն»



ՊԱՏԿԵՐ ՀԻՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՐՏԱՏՊԵԱԼ Հ․ Ղ․ ԱԼԻՇԱՆԻ

ԱՅՐԱՐԱՏԷՆ

ԺԱ․ դարուն մէջ Ծաղկոց գաւառին մէջ շինուած է այս եկեղեցին, Ս․ Կաթողիկէ կամ Ս․ ՅԱՐՈՒԹԻՒՆ անուամբ ։ (Տես ԱՅՐԱՐԱՏ, երես 265)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

— ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ պիտի կատարուի Մայիս 28ին, ներկայութեամբ քուէարկու պատգամաւորաց յամենայն կողմանց։

— Կ. ՊՈԼՍՈՑ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆ, որ հինգ տարուան հատատութիւն մէջ, այս տարի ընծայեց իւր անդրանիկ ընթացաւարաներն, թուով 18։

—Այտընի քաղաքին Հրէից Թաղն հրոյ ճարակ եղած է. առաւել քան 200 տուն հրկիզեալ են։ Ութ անձինք բոցերուն մէջ մեռեր են և բազումք վիրաւորեալ են։

—Մանէսթիք կոչուած նաւն Գուինեթաունէն մեկնելէն 5որ, 18 ժամ և 8 վայրկեան վերջ հասաւ ի Նիւ Եորք։ Ասլանտեան ովկէանն կտրելով Եւրոպայէն յԱմերիկա ճամբորդել ինչ զարմանալի արագութիւն ստացած է։

—ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ ՄԻ Ի ՆԻՒ-ԵՈՐՔ հատատելու ծրագիր մի կը մշակուի, և հարկաւոր դումարն 250 հազար թալէր, դոյացուելու արդէն կ'աշխատին։ Բուսաբանական պարտէզ մի շատ կարեւոր է ամեն քաղաքակրթեալ մեծ քաղաքի համար՝ իբրեւ զբօսալի վարժարան իրագիտական։

— Ի ճաշուն որ տրուած է ի Լիվատիա ի պատիւ Ֆուատ Փաշայի, յատուկ դեսպանի Սուլթանին, Զարն ստատանած է հետեւեալ բաժակաճառն։—

Նորին Վեհափառութիւն Սուլթանն շատ պատիւ ըրած է ինձ և իմ կայսերական տան, առաքելով առ իս բարձր աւագորեար իւր պալատէ հանդերձ շքեղ նուիրօք։ Այլ ես և իմ տան անդամք չունէինք պէտք այս նոր աղայուցի աղնիւ դիտմանց Սուլթանին, քանզի ամենքս ալ կը ճանաչենք վարչական հաղուագիւտ բարեմասնութիւններն այս վեհապետին որոյ գաւազանի ներքև այնքան զանազան ցեղեր կ'ապրին խաղաղ և յաջող։ Շատ երջանիկ եմ ես լինելով ի համարի Նորին Վեհափառութեան բարեկամաց։ Ստատին յարաբերութիւններն որք գոյ են արեւելեան Եւրոպիոյ երկու մեծ կայսրութեանց միջև, և զորս կը պարտիմք Սուլթանի աղնիւ նախաձեռնութեան, արեւելեան ժողովրդոց կ'ընծայեն երաշխիք մի վասն խաղաղ զարգացման իւրեանց նիւթական և բարոյական յաջողութեան։ Այս իմաստիւ ահա կը բարձրացնեմ գլխիս բաժակ և կ'ըմպեմ զայն իմ կայսերական բարեկամին, Ն. Վ. Ապտիւլ Համիտի կենացն։

Սեպտ. և Հոկտ. ամսոց մէջ ի Ռուսիա ինպաստ տվելոյ հանգանակուած նուէրներու գումարն եղած է մէկ միլիոն 200 հազար ռուպլի, ըստ Արծագանքի։

—Եգիպտոսի ներածութեանց գումարն որ 1889 ին 6միլիոն 750 հազար էր, այս տարի 8 միլիոն 600 հազար Եգիպտական ոսկւոյ բարձրացած է. արտածութիւնք ալ 12 միլիոնէն 14 միլիոն Եգիպտական ոսկւոյ բարձրացած են։

— Պուլկարիոյ Սոֆիա քաղաքէն բանտարկելոց մայրերն, կիներն և քոյրերն ուղղած են Կ. Պոլսոյ դեսպանաց յիշատակագիր մի նման այնոցիկ զորս մատուցած էին Սոֆիայի դիւանագիտական գործիչներուն։

— Պարսից Շահն ծիախոտի մենավաճառութիւնն ընդհանուր յայտարարութիւն մի հանած է։

— Բարեգործական ընկերութիւնների նկատմամբ նոր մշակուած կանոնների համաձայն ընկերութիւնների վարչութիւնները պէտք է ներկայացնեն իրանց հաշիւները ներքին գործոց նախարարութեան։ Բարեգործական հաստատութիւնների տարեկան հաշիւների ստուգելու և հաստատելու ժամանակ պէտք է ներկայ գտնուի տէրութիւնից նշանակուած մի ատիճանաւոր։

— « Հիւսիսային գործակալութեանը » հեռագրում են Կ. Պոլսից, որ սուլթանը հրամայել է Բ. Դրանն այսուհետև ոչ մի Հայի պաշտօն չտալ Պետերբուրգի, Լոնդոնի, Փարիզի, Վաշինգթոնի և Բոքարեշտի դեսպանատներում, քաղաքներ, ուր հայ դաղթականներ են տպրում։

«ԱՐՁԱԳԱՆՔ»

— ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. « Վերջին ժամանակները մեր դաւառի հայ գիւղացիք սկսել են աւելի էլ մեծ թւով և ամբողջ ընտանիքով պանդխտել իրանց երկրից։ Ոմանք պանդխտում են Կովկասեան մեծ քաղաքները, ոմանք էլ Ռուսաստան, օրինակ, Բոստով քաղաքը և այլն։ Մեր կարծիքով պանդխտութեան գլխաւոր պատճառն այն է, որ գիւղացիք հողի համար վէճեր ունենալով կալուածատերերի հետ, մանաւանդ կալուածատէր թուրք խաների հետ, վերջի վերջոյ կորցնում են իրանց հողերը, որոնք անցնում են խաների ձեռքը։ Ադվոկատներն էլ, ի հարկէ, մեծ մասամբ խաների կողմն են պահում, որովհետև նրանցից աւելի նիւթական շահ ունեն, քան գիւղացիներից։ Եւ երբ մի գիւղ, ինչպէս օրինակ գաւառիս Խաջիվար Թազադիւղ անուանված գիւղերը կորցրել են իրանց վարելահողերը, գիւղի բնակիչները կարատում են իրանց այգիների ծառերը և թողնելով գիւղը, պանդխտում են ուրիշ տեղ, հեռու օտարութեան մէջ։ Գիւղերը այդպիսով ամայի են մնում, իսկ նրանց հողերը տիրապետում են թուրք խաները։

«ՄՇԱԿ»

— Պուլկարական դժուարութեանց մասին Ն. Ե. ՀԷՐԱԼՏ կ'ըսէ, Սըր Ռ. Հուայթ, Բրիտանիոյ դեսպանն ի Կ. Պոլիս, երեկ (25 Դեկտ.) Սոֆիայէն, անցնելու պահուն տեսակցեցաւ Սթամպուլոֆի հետ, և յորդորեց զնա գոհացում տալ Ֆռանսական կառավարութեան։ Ֆռանսայի Արտաքին Գործոց նախարարն, Ռիպո կ'գանգատի թէ Պուլկարական կառավարութիւնն դաշնագրի հակառակ գործած է, բազմաթիւ անձինք բանտարկած է առանց հարցաքննութեան, և վայրագօրէն տանջած է զայնս ի խոստովանութիւն ստիպելու համար։

Միւս կողմանէ Սթամբուլոֆի կը սպառնայ հրաժարիլ եթէ Անգղիոյ կառավարութիւնն նեցուկ չլինի իրեն։ Եւ որովհետև իրեն յաջորդելիք նախարարապետն, Սթոյլոֆ ռուսամէտ քաղաքականութեան կը ծառայէ, կրնայ այս նկատողութիւն ստիպել զլորտ Սալզպըրի փոխելիւր դիրքն այս խնդրոյ մէջ։

Պերլինի կառավարութիւնն ևս կը քաջալերէ ի հարկէ զՍթամպուլոֆի դիմադրել Ֆռանսական պահանջմանն։

— Սըր Ռ. Հուայթ մեռած է « Կռիֆէ »

— Պուլկարիոյ կառավարութիւնն ոսկի և արծաթ դրամ կտրած է իշխան Ֆէրտինանի պատկերովն զարդարուած։ Այս կը նկատուի իբրև մեծ քայլ մի դէպ յանկախութիւն կատարեալ։ Դրամներն շրջաբերութեան հանուած են Դեկտ. 14 ին։

— Սուլթանն Դեկտ. 17 ին խնջույք մի տուած է ի պատիւ Ֆռանսայի դեսպան Գամպոնի։ Եւ ընթրեաց Սուլթանն բաւական երկարօրէն խօսակցած է Գամպոնի հետ առանձին։ Նաև Սուլթանն Օսմանիէի մեծ ժապաւէնովն պատուած է զդեսպանն։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳԱԲՐԻԷԼԵԱՆ Մ. Ս.) «ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ,» ի պէտս ազգային վարժարանաց. Նիւ-Եորք, տպարան Մ. Ս. Գաբրիէլեան, 1891, (128 էջ, 8 մեծ, գին 5 ֆրանք։) Նկատելի նորութեամբ և հիւսուածքով մատդրութեան և ընդունելութեան արժանաւոր երկասիրութիւն։

«ԲԱԶՄԱՎԷՊ»

Բաժնէգին յղելու սուղ կերպ մի

Ռուսահայ ազգային մի Ռուսասանէն 4 բուբլի թղթադրամ յղած է խմբագրութեանս՝ կնշեալ պահարանի մէջ պահպանուած։ Նիւ Եորքի գործակալ մի մեղ ծանուցած լինելով թէ ծրար մի կայ մեր անուան, գընացինք վարի քաղաք, և տեղեկացանք թէ գերմանական փոստով հասած է նամակն, և գերմանական փոստի ծախքն (70 սենթ.) Նիւ Եորքի մաքսն (20 սենթ) և գործակային պահանջն, ընդ ամենայն 95 սենթի հասած են, զոր վճարելով՝ ստացանք նամակն։ Ըսել է յղեալ 2 թալէռին 1 թալէռն ծախք ըրինք. եթէ նամակն իրրև նամակ յղուած լինէր, աշ թէ իրրև ծրար կամ աւանդ, ուղղակի մեր ձեռք կը հասնէր առանց ժամանակի և դրամի այնքան զոհողութեան։

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Նիսա 2 Յունվարի 1892

161 8դ Էվինիու, շաբաթ երեկոյ. բոլոր հայրենակիցք կը հրաւիրուին ներկայ լինել այս կարևոր նստին, ուր 10 ասենախօսներ կարճ կարճ պիտի խօսին թէ Ամերիկայի Հայերն ինչ օգտակար արհեստներ կրնան սովրիլ և ինչ շահաւոր գործեր ընել, որոց մինչև ցարդ միջամուխ եղած չեն։

LANDMAN & SONS,

ՎԱՃԱՌԱԿԱՆ

ՄԱՐԴԱՑ ԵՒ ՏՂԱՅ ՀԱԳԵՍՏՈՒՑ

ՎԱՅՏԵՀԵՂԻՆ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԵՒ

ՀԱԿՓԱՌՈՒՔ ԳԻՆԵՆ.

ԵՐԲՈՐԴ ԷՎԻՆԻՈՒ, ԱՆԿԻՒՆ 26 Դ ՓՈՂՈՑԻՆ



JOSEPH LAJOIE

ԺԱՄԱԳՈՐԾ ԵՒ ԴՈՀԱՐԱՎԱՃԱՌ

231 FRONT ST.

WORCESTER MASS

Այս քաջածանօթ վաճառատան մէջ լաւ ապրանքներն կը տրուին չափաւոր դնով, և ժամացոյցներ կը նորոգուին խնամով ի ձեռն հայազգի ճարտար ժամագործ Տիար Փրուտի, որ նոյն վաճառատան մէջ գործելով՝ անգղիերէն խօսիլ չգիտցող Հայոց մասնաւոր դիւրութիւն կ'ընծայէ։

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE, NEW YORK.

Դեղադիրք կը պատրաստուին խնամով

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY

16 և 17 րդ փողոցներու միջև արևելեան կողմն։

—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—

Նախաճաշ 40 և ճաշ 75 սենթ

ԲԱՌԳԻՐՔ ԳԱՂՂԻԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ

ԱՐՈՒԵՍՏԻՑ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

ԵՒ

ԳԵՂԵՑԻԿ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ընտիր թղթի վրայ, մերձաւորապէս 1300 ձևերով, մեծադիր քառածալ, մօտ 300 թերթերէ բաղկացեալ։ Ի վերջ Երկրորդ Հատորին՝ յաւելուած Հայերէն—Գաղղիերէն Բառագրոց։

ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՑ

Հ. ՄԱՆՈՒԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԲԱԶՈՒՆՈՑ

Լոյս տեսած է Առաջին Հատորն, 150 թերթ. 627 գեղեցիկ ձևերով։ Բացուած է բաժանորդագրութիւն Երկու Հատորին 'ի միասին։

ՊԱՅՄԱՆԵՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Ա. Կանխիկ վճարումն բաժանորդագնոյ Երկու հատորին 'ի միասին։

Բ. Բաժանորդագինն է ֆր. 50 (20 ռուբլի)։

Գ. Բաժանորդագրութիւն կը չարունակուի մինչ ցվերջ 1891 տարւոյս։

Դ. Բաժանորդագրութեան պայմանաժամն աւարտելէ յետոյ՝ գինը պիտի բարձրանայ։

Ե. բաժանորդագրուողք պիտի ընդունին անդորրագիր 'ի վարչութենէ Տպագրատանս՝ դրամոյ ստացման մասին։

Զ. բաժանորդագրուողք պիտի ընդունին Առաջին Հատորն անդորրագրին հետ 'ի միասին. իսկ Երկրորդ Հատորն՝ այն ինչ ապագրութիւնն աւարտի։

«Հայք»ի Խմբագրատունն, յատուկ հրաւիրմամբ Վենետկոյ Մխիթարեանց Տպարանապետին, Բաժանորդագրութիւններ կ'ընդունի Հ. Քաջունեան բառարանին և Հ. Ալիշանի գրքերուն համար, ինչպէս նաև «ԲԱԶՄԱՎԷՊ»Հանդիսարանին համար։

BUSH & CO

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԳԵՂԱՊԱՏՈՒՔ

(Հաստատեալ ի 1849)

56 FRONT STREET WORCESTER, MASS.

Դեղադիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր դնով

LOUIS MULLER

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԳԻՆԻՈՑ ԵՒ ԶՕՐԱՑՈՒՑԻՉ ԸՄՊԵԼԵԱՑ

304 WEST 38th STREET

8դ. Ավենիւին մօտ Նիւ Եորք

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ